

նորան է հասցնելու՝ որ իւրաքանչիւր դաս պէտքէ վերջնական ձև ունենայ: Բայց և այդ գրութիւնը յառաջ է բերվում որպէս ցանկութիւն, և ոչ անպայման պահանջ: Աւսուցչի վերայ ևս առաւել մեծ պարտականութիւն կայ եռանգուն կերպով հասկանալու ծրագրի պահանջները և կեանքի երեւոյթները և նորա մէջ համապատասխանութիւն վերականգնեցնելով:

Շ-բ-ն-է-է

Գ. ԵՐՋՆԿԵԱՆՆԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ, ՍԵՐՆԳԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԵՐ.

(Շ-բ-ն-է-է. Ա-բ-բ-բ. Բ. Բ.)

Բ.

Բայց մի՞թէ կարող էր առանց հետքի մոռացուել այդ գաղափարը, երբ որ նորա մէջ պարզ կերպով լսում էր իւրաքանչիւր հայր և մայր, ես և դու՝ թէ Գոռք տալիս էք ուսումնարան ձեր սիրելի որդւոց, որ նորա խելօք և կրթութեամբ, բարի և ազնիւ, առողջ և ուժեղ մարդիկ գտնան. բայց զգոյշ կացէք, ուսումնարանը կրղեղնեցնի նորանց, կրնի հարացնի և կրթութեան նոցա մարմինները, իսկ հիւանդ մարմնոյ մէջ զարգանումէ և հիւանդ հոգի. ձեր որդիքը կրվերադառնան ձեզ մօտ ֆիզիքրապէս հիւանդոտ և բարոյական ստոր արարածներ, նոքա կունենան զրդուող և չոր քնուտրութիւն, նոցա միտքը բռնութիւնի կրլինի, նոցա սիրտը կրլինի ցամաք. Աարճող էին արդեօք հայրերը և մայրերը սառնարիւն կերպով լսել այս խօսքերը: Եթէ որ նոքա կարող կրլինէին խօսքերից յետոյ հանդիստ մնալ, այն ժամանակ նոքա արժանի չէին լինիլ հայրեր և մայրեր սուրբ խօսքերին: Բայց նոքա կարող էին մտածել թէ իրանց խարում են առանց մի պատճառի: Այո՛, նոքա այդպէս կարող էին մտածել. եթէ միայն այդ խօսքերը դադարի խօսքեր լինէին. եթէ որ այդ նոքա շունենային իրանց ճշմարտութիւնը հաստատող անհերքելի փաստեր. վիճակագրական թուանշաններ: Բաղդաւորապէս՝ այդ փաստերը քննուեցան, թուանշաններն հաւարուեցան և կասկածել այլ ես անկարելի էր. այդ ապացուցվեց՝ և իւրաքանչիւր ազնիւ մարդու վերայ այդ շարեաց դէմ կուուելու պարտականութիւն զրուեցաւ, շրնայելով որ նորան պաշտպանում էին հաշտութեամբ և խնայմանկապարժներ:

Ամենից առաջ գտնանք այն հետեւներն. որք ստացուել են ուսումնարանների մէջ սւսանող մանկանց աչքի հիւանդութիւնները քննելուց: Ախրիսօփի և Վոնի ասելով կարճատեսութեան զարգացման վերայ զպրօցները արած ազդեցութիւնը, որին առաջ կուրօրէն պէտք էր հաւատալ միայն, գիտնական ճանապարհով ապացուցանելու առաջին փորձը արաւ անգլիացի Աւերը ներկայ դարուս սկզբին 1812 թուին, նորա օրինակին հետեւեցին երկ-

րի վերայ զանազան կողմերում իսկ առանձնապէս Գերմանիայում, բայց այս հետախուզութիւնները, որ գործվում էին մասամբ կառավարութեան յանձնարարութեամբ, մասամբ մասնաւոր անձանց միջոցով, զանազանում էին մի որ և է ձևի պահասութեամբ և անհետեղականութեամբ, Այդպէս էին Շիւրմէյի ճիւղի հետախուզութիւնները Բագնի մեծ դքսութեան մէջ, որոնցից երևեցաւ որ 15 դպրոցների 2172 աշակերտներից 392 աշակերտ այսինքն $\frac{1}{5}$ մասը կարճատես էր, Բիւրգերեան բարձրագոյն դպրոցների 937 աշակերտներից երևեցաւ 46 կարճատես այսինքն $\frac{1}{20}$ մասը, Գիմնազիայի 5 ըզ և 6 ըզ դասատանց և լիցէոնների մէջ կարճատեսների մասնախոյժաւի պրոցէնտ որք կազմում էին բոլոր աշակերտների թուի $\frac{1}{10}$ և մինչև անգամ $\frac{1}{10}$ մասը, Սօկալսիին քննեց աշակերտաց աչքերը Փարիզում և եկաւ այն եզրակացութեանը որ Կարոլլոս Մեծի գիմնազիայի 807 աշակերտներից 89 կարճատես էին, այսինքն համարեա մի կարճատես 9 աշակերտի վերայ, Լիւզովիկոս Մեծի գիմնազիայի 170 աշակերտների մէջ կային 25 կարճատեսներ այսինքն մի կարճատես 7 մարդու վերայ, այն ինչ Փարիզի 5 և 7 նահանգների տարրական դպրոցների 6,300 աշակերտների մէջ չկար և ոչ մի կարճատես, Յետոյ Նգերը հետազոտութիւն արաւ Աիէնայում Բիւտը Լէյպցիգում և ինչ Բայց բոլոր այս հետազոտութիւններից նշանաւոր էին աւելի գօտոր Հերման Կօնի Բրէսլաւում արած աշխատութիւնները, նա իւր ընդարձակ փորձերն արաւ 1865 թուականին նախ 7 568 աշակերտի և ապա 10 060 աշակերտների վերայ, և այս փորձերը կարող են վճռական ընդունուել ճշգրիտ զննութեանց պատճառով, թէև զննութեանց ձևը շատ աւելի է սպասել տալիս, Կօնը, ասումէ Աերխօլը, իւր զննութեանց մասին գրած մեծ հեղինակութեան մէջ իրրև հիմունք ընդունեց այն տեղեկութիւններն ու զննութիւնները, որ քաղից նա փորձեր անելով 5 գիւղական ուսումնարանների վերայ Լանգենբելայում, 20 տարրական ուսումնարանների վերայ, 2 կանանց Բարձրագոյն դպրոցների վերայ, Բրէսլաւի 2 ըէաւական ուսումնարանների և 2 գիմնազիանների վերայ, 10,060 աշակերտներից 6,059 հոգու վերայ նա ինքը փորձեր արաւ իսկ մնացածներին նորա գրութեան համաձայն քննեցին ուսուցիչները, Շատ ժամանակ չէ, որ Կօնը 410 Բրէսլաւեան ուսանողների ենթարկեց մանրամասն զննութեան նոցս աչքերի զրութեան վերաբերութեամբ, Մի և նոյն ժամանակում հարկաւոր ուշադրութիւն էին դարձնում հասակի, պարապման ժամանակի դպրոցների կազմութեան և տեղադրութեան վերայ, որոշում էին աչքերի հիւանդութեան յարաբերութիւնը այդ բոլոր զանազանատեսակ պոլյամների հետ և այս կերպ գործողութիւնից ստանում էին հետաւոր գիտնական փորձերի համար այնպիսի հաստատուն հիմք, որպիսին թուի թէ չէր կարելի տեսնել գիտութեան մի ուրիշ ճիւղի մէջ, Այս բոլոր փորձերից յետոյ երևեցաւ, որ 10 060 աշակերտներից 17,1% չունէին կանոնաւոր տեսութիւն, իսկ վերջին թիւը բաժանվում էր ոչ հաւասարապէս, այլ հետեւեալ կերպով.

Գիւղական դպրոցներում	5 2/
Քաղաքական տարրական դպրոցներում	14 7
Միջնակարգ դպրոցներում	19 2
Վանանց բարձրագոյն դպրոցներում	21 9
Բէալական դպրոցներում	24 1
Գիմնազիաներում	31 7

Չորս հարիւր տասն ուսանողներից 68/ - ի տեսութիւնը կանոնաւոր կերպով չէր զարգացած, եթէ չհաշուենք աչքի հիւանդութիւնները խօսքիս սահմանափակ մտքով և նայենք միայն կարծատեսութեան վերայ, այն ժամանակ էլ այն ցաւալի հետեւանքին կհասնենք, որով կերևի թէ մանուկների բոլոր թուից համարեա 10/ կարծատեսներ էին և այս կերպով էին դասաւորուում:

Գիւղական դպրոցներում	1, 4/	} համարում էր 4, 11
Քաղաքական տարրական դպրոցներում	6, 7	
Վանանց բարձրագոյն դպրոցներում	7, 7	
Միջնակարգ դպրոցներում	10 3	
Բէալական դպրոցներում	19, 7	
Գիմնազիաներում	26, 2	
Ուսանողներ	60, 0	

Այստեղ՝ ինչպէս և կարելի է նկատել, թուանշանները աստիճանաբար բարձրանում են, բայց այս հանգամանքը աւելի նկատելի է առանձին դպրոցների դասատանց քննութեան մէջ, ինչպէ՞ս օրինակի համար քաղաքական տարրական դպրոցների և գիմնազիաների:

Տարրական դպրոցներ	VI	V	IV	III	II	I
			2.9	4.1	9.8	9.8
	12 5	18 2	23.7	31.0	41 3	55.8

Այս պատճառաւ չի կարելի ժխտել Վօնի անհաճոյ դատմունքը առաւել նորա համար, որ նորա գրքի վերջում կպցրած ընդարձակ ցուցակից երևու մէ՛ որ դասատանց հետ բարձրանումէ ո՛չ միայն կարծատեսների թիւը, այլև նոյն իսկ կարծատեսութեան աստիճանը սաստկանումէ, Վերջին դէպքում միայն կանանց և միջնակարգ դպրոցներն են բացառութիւն կազմում, Այս կերպով ահա՛ կարծատեսութիւնը ընդհանրապէս յառաջադիմական է և կարող է փոխարինուել ուղղակի կերպով աչաց թոյլ տեսութեամբ, Վօնի անձանձիր աշխատութեանց վախճանական հետեւանքներն հետեւեալներն էին 1) չկայ ո՛չ մի դպրոց առանց կարծատես աշակերտների 2) գիւղական դպրոցներում կարծատեսների թիւը մեծ չէ 3) քաղաքական դպրոցներում կարծատեսների թիւը ութն անգամ շատ է՝ քան գիւղական դպրոցներում 4) քաղաքական տարրական դպրոցներում կարծատեսների թիւը 4 և 5 անգամ մեծ է քան թէ գիւղական դպրոցներում կանանց բարձրագոյն դպրոցներում կարծատեսները շատ են քան տարրական դպրոցներում 5) միջնակարգ դպրոցներում կարծատեսները 1/ մասից աւելի են, բէալական դպրոցներում համարեա 1/ մասն են կազմում, գիմնազիաներում բոլոր աշակերտների

Թուի՝ մասից աւելի են: 7) բարձրագոյն գպրոցներում ոչ մի դասատուն չկայ առանց կարճատեսների: 8) միջին հաշուով բոլոր գպրոցների բարձր դաստանց մէջ աւելի շատ կարճատեսներ կան, քան ստորիններում: օրինակ բէալական գպրոցներում կարճատեսները կազմում են առաջին դասատան բոլոր աշակերտների՝ մասը, իսկ գիմնադիաններում կիսից աւելի, 9) կարճատես տղաների թիւը տալիս է համարեա կրկնակի տօկոս կարճատես աղջկանց թուի հետ համեմատելով: 10) քաղաքների տղայոց մէջ միջին թուով կարճատեսները 8 անգամ շատ են, քան գիւղական տղաների մէջ, 11) բոլոր գպրոցներում կարճատեսների թիւը մեծանումէ հասակին համաձայն 12) անկասկած է, որ բէալական գպրոցներում և գիմնադիաններում իւրաքանչիւր բարձր դասատան մէջ մեծանումէ կարճատեսութեան աստիճանը:

Գօկտօր Կօնը շատ արդարացի կերպով պաշտպանվումէ ենթադրութեամբ ծագելի այն մեղադրութիւնից, որ իրրև թէ ինքը միայն գպրոցներին է մեղադրում երեխայոց մէջ չափից դուրս կարճատեսութեան զարգացման համար: Ըստ երևութիւն և գպրոցից դուրս, մինչև անգամ ծնողաց տան մէջ ներգործում են շատ անհաճոյ հանգամանքներ: Այս միտքը փաստելով ապացուցանելու համար, պէտք էր դիմել հասարակութեան այլ դասակարգերին, օրինակ արհեստաւոր դասի շրջանին և համեմատութիւն կազմել քննութեան համար վերջինների յայտնի հասակների և գպրոցի նոցա համապատասխան դասատանց մէջ: Գեռ ևս չկայ այդպիսի համեմատական քննութիւն, Այնու ամենայնիւ կարելի է ամենայն հաւատարմութեամբ ասել, որ նոյն հասակի տղաները, ինչպէս և գիմնադիաններում առաջին դասատան աշակերտները կարճատեսների 55—56 / միջին թիւը չեն կազմում: Եւ եթէ մինչև անգամ ընդունենք, թէ վատ վարուելը, ճրնչումն մի որ և է բանում, մանր գրութիւնը, մարմնոյ կորացած գրութիւնը և այլ այսպիսի անհաճոյ հանգամանքներ պատահում են և տնային գործերում ու նոյնպէս վատ աղգեցութիւն գործում անողջութեան վերայ, այնու ամենայնիւ պէտքէ աւելացնել, որ այդ սովորութիւններից շատերը մտաք են գործել տան մէջ՝ գպրոցից, և որ գպրոցը հարկաւոր միջոցներ չի ընդունում ոչնչացնելու և արմատախիլ անելու վատ սովորութիւնները, և թէ նա ընդհակառակն մի կերպով էլ արագացնումէ նոցա վարգացումն:

Սորա են այն հետեւանքները որոց հասաւ Գօկտօր Կօնը, նոցա մէջ, շնայելով Կօնի բոլոր ազնուութեանը, շատ բաներ զանց են առնուած, շատ բաներ ոչ բոլորովին ճիշտ են, ինչպէս օրինակ՝ այն նկատողութիւնը, թէ կարճատեսութիւնը տիրումէ տղաների և ոչ աղջկանց մէջ — այս ոչ բոլորովին ճշմարիտ է, որովհետև կարճատեսութեան ամենասաստիկ աստիճանները յաճախ պատահում են աղջկանց մէջ, քան թէ տղայոց: Բայց շնայելով Կօնի աշխատանքի բոլոր՝ մասամբ ահամայ պակասութեանց վերայ, այդ աշխատութիւնը տալիս է մեզ շատ ողբալի հետեւանքներ միայն կարճատեսութեան վերաբերմամբ, մինչև անգամ եթէ մենք մի կողմը թողնենք աչքի միւս բոլոր հիւանդութիւնները, որք ստացվում են զըպրոցներում: Բայց դուք ընթերցող՝ շատ կարելի է կհարցնէք թէ մի՞թէ կար-

Ճատեսութիւնը հիւանդութիւն է, Մի՛թէ նա վնասար է, Այո՛, հիւանդութիւն է դա և վտանգաւոր հիւանդութիւն, «Յառաջախաղ կարճատեսութիւնը, ասում է Գօնդերբուր, է աչքի իսկական հիւանդութիւն, Ես առանց ամենայն կասկածանաց հաստատում եմ, որ կարճատես աչքը՝ հիւանդ աչք է, Արճատեսութեան բարձր աստիճանները աւելի քիչ յոյս են տալիս իւրեանց դրութեան մէջ անփոփոխ մնալու վերաբերութեամբ, քան թէ ցածր աստիճանները, նորա շարունակում են անգամ մինչև ծերութիւն: Իսկ երիտասարդութեան ժամանակ կարճատեսութեան համարեա թէ իւրաքանչիւր աստիճանը կարող է յառաջախաղ (շարունակուող) լինել, Այս հասակը կարճատես աչքի համար կազմում է մի կրիտիքական հասակ, եթէ որ կարճատեսութիւնը այդ միջոցում չի զօրեղանում, այն ժամանակ նա կարող է և ապագայում մնալ անփոփոխ, իսկ եթէ նա կսկսի սաստկանալ, այն ժամանակ դժուար է ասել, թէ մինչև որ աստիճանի կը հասնի նա ապագայում, Աւրեմն այս շրջանի մէջ պէտք է աչքերի համար վնասակար բոլոր հետեւանքների առաջը հոգատարութեամբ առնուին: Սորա համար պէտք է շատ լուրջ կերպով մտածել, Իւրաքանչիւր յառաջախաղ կարճատեսութիւն ստիպում է մտածել ապագայի վերայ, որովհետև յառաջախաղ մնալով, աչքը աւելի կը տկարացնի և վերջ ի վերջոյ՝ բոլորովին կը զրկի մարդուն տեսութիւնից: Այսպէս ուրեմն յառաջախաղ կարճատեսութիւնը ընդհանրապէս վնասակար է, Չնայելով սորան, հէնց ուսումնարաններումն է ընդհանրապէս դարգանում յառաջախաղ կարճատեսութիւնը, ինչպէս այդ ապացուցանում է զօկտօր Էրիսմանը:

Պ. Էրիսմանի հետազօտութիւնը մեր տեսած այս հարցին վերաբերեալ ուրիշ աշխատանքներից ո՛չ միայն ամենաբարեխիղճ աշխատութիւնն է, այլ և նշանաւոր է իրրև մի գիտնական գործ: Այս գիտնականը ի նկատի ունելով յառաջախաղ կարճատեսութեան առաւելութիւնը լոկ կարճատեսութիւնը չը հետազօտեց, այլ նա հետազօտեց և նորա զանազան աստիճանները, Մենք չենք կարող յառաջ բերել այստեղ նորա աշխատանքի բոլոր մանրամասնութիւնները, նորա բոլոր առաւելութիւնները իւր նախընթաց աշխատանքներից, որովհետև այդ մեզ շատ հետու կը տանէր, Ի դէպ այստեղ մենք կարող ենք միայն նկատել, թէ ցանկալի կը լինէր, որ հետազօտութիւնները կատարուէին ուսման ամբողջ տեւողութեան ընթացքում և ոչ թէ միտրեիցէ միջոցում, որովհետև այդ օրինակ հետազօտութիւնները, դպրոցի արած ազդեցութեան վերայ առ կարճատեսութիւնը, իրաւունք կը տայ միայն վախճանական եզրակացութեան դալու, ինչպէս բուրովին արդարացի կերպով նկատումէ դօքտօր Ադամիկը, Իսկ որովհետև այդպիսի հետազօտութիւններ զեռ չը կան, ուրեմն զօկտօր Էրիսմանի աշխատութիւնը կը մնայ առ այժմ՝ լաւ աշխատութիւններից մինը իւր տեսակում, Այս հետազօտութիւնները եղան Պետերբուրգում և գոհութեամբ պէտք է ասել, որ այնտեղի դպրոցները բացին իրանց դռները հետազօտողի առաջ և նորա հետ շը վարուեցան այնպէս, ինչպէս երկու տա-

րի առաջ Բերլինի գպրոցները վարուեցան Ֆրիդրիխ Ֆալկի հետ, որին մանկավարժներից մինը չբժողից տեսնել գպրոցները մինչև անգամ աշակերտների բացակայութեան ժամանակ, Գօկտօր Էրիսմանը հետադառնելով Պետերբուրգի գպրոցները եկաւ այն կարակացութեան, որ առհասարակ ուսման տարիների թուի շատանալու հետ պակասումէ թոյլ կարճատեսների թիւը և համապատասխանօրէն աւելանումէ զօրեղ կարճատեսների թիւը, Աարճատեսների վերայ նշմարուած հիւանդութեան երեւոյթներից նշանաւորն է աչքի ներքին -- շէշ ուղղաձիգ մկանունքների խանգարումն, ներքին ուղիղ մկանունքների ուժեղապէս գործողութեան ժամանակ, կարճատեսութեան միջոցում, նոցա ուժերը անհամապատասխան կերպով շատանում են կամ մինչև անգամ ըստ առաջնոյն, որ դէպքում և հարկաւոր են մկանունքների անսահման ջանքեր, որպէս զի ստացուի տեսութեան առանցքների իրար հանդիպման այն ատիճանները որ առաջ հեշտ կերպով կարող էր պահպանուել յընթացս ամբողջ ժամերի. չափից դուրս ձգողութիւնից հետևումէ յոգնութիւն, մկանունքները համարեա անկարող են լինում իրանց գործը կատարել, որ դէպքում անհրաժեշտ է երկոքին աչքերի տեսութիւնը և որից նոքա երբեմն մի քիչ զազրում են, իսկ յետոյ նորից գողգողալով կարճանում են, սորա հետևանքը լինում է այն, որ հիւանդը կարգալիս՝ տառերը և տողերը թռչկոտում են նորա աչքերի առաջ, նա երբեմն խաւար է տեսնում և իսկականի երկպատիկը և շատ կամ քիչ սաստիկ ցաւ է զգում, ճնշումն աչքերի գունտների վերայ, ցաւում է նոյնպէս քթի վերին մասի մօտ, Այս երեւոյթները ստիպում են կարճատեսին դադարել պարապմունքից, բայց փոքր միջոց անցնելուց յետոյ մկանունքները միջոց են ունենում հանգստանալու նոր ուժով գործելու համար. նորից հեշտ կերպով պարապմունքի կարևորութեան համար իրար են հանդիպում տեսութեան առանցքները, բայց յետոյ շուտով կրկնվում են նախկին երեւոյթները. այս գրութիւնը այնքան է տևում, որ մինչև ստիպում է հիւանդին դիմել վերջապէս բժշկի օգնութեանը, ներքին ուղիղ մկանունքների այս անբաւարար գրութիւնը ունի իհարկէ իւր զանազան ատիճանները. յաճախ պատահում է որ տեսութեան առանցքների իրար հանդիպումն այնպէս է նեղացնում հիւանդին, որ նա չի կարողանում երկու աչքերով մէկ տեղ գործել. երբ որ նա նայումէ մօտիկ տարածութեան վերայ եղող մանր առարկաների վերայ, այն ժամանակ նա զրկվումէ երկու աչքով տեսնելու կարողութիւնից. մէկ աչքը բոլորովին կրաւորական զեր է խաղում տեսութեան գործում և գորա համար էլ շիջանում է, Շատ յաճախ այս շլութիւնը յառաջանում է միմիայն աչքերի՝ մօտիկ գտնուող մանր առարկաների վերայ բեկեռելուց, այն ինչ աւելի հեռաւորութեամբ գտնուող առարկաների վերայ նայելու ժամանակ տեսութեան գործողութիւնը կատարվում է երկու աչքերի էլ փոխադարձ օգնութեամբ, Այս գրութիւնը կոչվումէ յ-բ-բէբ-է-ա-բ-բ-է-ն շ-բ-է-ն, Յաճախ այս յարարեական շլութիւնից յառաջանում է բացարձակ շլութիւն, այսինքն հի-

անդի աչքերը անուայման կերպիւ շիլ են մնում՝ և հետո տեղիք նայած ժամանակ և այսպիսով աւելի քանք չի գործ դնում նայելու երկու աչքերի փոխադարձ օգնութեամբ։ Այս դրութիւնը զարգանում է ներքին ուղիղ մկանունքների պակասաւոր դրութիւնից, իսկուպէս այն դէպքում, երբ որ հիւանդները հեշտ կերպով զրկվում են երկու աչքերի միակերպ գործողութիւնից, երբ օրինակ՝ մի աչքի տեսութիւնը լիտպէս դժուարացած է կամ եղջերամաշկի նսեմութիւնից կամ երբ որ մի աչքը միւսից նշանաւոր կերպով զարգացած է կարծատեսութեամբ, այնպէս որ նա հետո նայելու ժամանակ քիչ է օգնում միւսին, կամ մինչև անգամ՝ բոլորովին չի օգնում։ Հիւանդութեան վերջիչեալ հանգամանքները մեծ նշանակութիւն ունին, որովհետև նորա նպաստում են կարծատեսութեան յառաջախաղ զարգացմանը։ Այս հարցի նշանաւորութեան համար դժուար էրիսմանը պարագեց նորա հետազօտութեամբ և եկաւ այն եղրակացութեան, որ ստորին դաստաներում 12^o / 20^o / և 30^o / կարծատեսներ ունին մկանունքային խանգարումն, իսկ բարձր դասատանց մէջ այդ թիւը 40^o / չի անցնում։ Ուրեմն ներքին ուղիղ մկանունքների թուլութեան դանաղանութիւնը դասատանց վերաբերութեամբ թէև յայտնի, բայց գորեզ է։ Սակայն, նորա ցուցակից երևումէ, որ ներքին ուղիղ մկանունքների անհաստատութեան ամենազօրեղ աստիճանները և արտաքին յարաբերական շլտութիւնը յաճախ պատահում են բարձր՝ քան ստորին դասատանց մէջ, այն ինչ այս վերջիններում տիրապետում են անբաւարար դրութեան թոյլ աստիճանները, իսկ ամենազօրեղ աստիճանները պատահում են շատ հազիւ և կամ բոլորովին չեն պատահում։ Բացի սորանից՝ երևում է, որ հասակների առաւելանալով մկանունքների բնական դրութիւնն պահպանող անձանց թիւը քանի գնում, այնքան անզաղար քշանում է և հազիւ շատանումէ մկանունքների սաստկապէս խանգարմունքից շարժարուող անձանց թիւը, նայելով թէ՛ որքան միջոց է անցրել աշակերտը դպրոցում։

Աւ այսպէս՝ Երիսմանի կարծիքով դպրոցը դրականապէս ոչնչացնում է տեսութիւնը. «Մեր ցուցակներից, ասումէ նա, ներկայանում է մեզ աշակերտաց աչքերի խանգարման մի զարհուրելի պատկեր, պայմանաւորուած յառաջախաղ կարծատեսութեամբ Կարծատեսութեան բարձր աստիճանների շնորհիւ ստացուած այս զարհուրելի խանգարումն, փնասակար է մեզ համար, նորա վերայ հաւասար կերպով ուշադրութիւն պէտք է դարձնեն աշակերտների ծնողները, դպրոցների փարչութիւնք և համոզուին որ յառաջախաղ կարծատեսութիւնը մի հիւանդութիւն է, որից նոցա մանուկների մի յայտնի մասը փոքր առ փոքր լղրկվումէ ամենակրեկի մի բանից—տեսութիւնից, 2ի կարելի չընդունել, որ այդ հիւանդութիւնը ստանում են մանուկները դպրոցների մէջ եղած ժամանակ. մենք արդէն գ/տենք, որ ստորին դասատանց մէջ շատ քիչ կարծատեսներ կան և որ կարծատեսութեան տարածուելը զօրեղանում է դասատանց բարձրանալու, անհասակների և ուսման տարիների թուի շատանալու հետ։ Այս շարաբաս-

տիկ հիւանդութիւնը իսկապէս գպրոցն է պատճառում: Բայց ես պէտք է սորա վերայ աւելցնեմ, որ կարճատեսութիւնը գպրոցական կրթութեան հետ կապուած անխուսափելի մի շարիք է: Այլ ընդհակառակն յառաջախաղ կարճատեսութիւնն է շարիք, որ յառաջանումէ միայն գպրոցների աննպատակայարմար կազմութիւնից, և այս շարեաց ասաջը կառնուէր ի հարկէ, եթէ որ հասարակութիւնը աւելի ուշադրութիւն դարձնէր գպրոցների կազմութեան վերայ, Իհարկէ ասաջ մենք շրջիտէինք յառաջախաղ կարճատեսութեան ծագման պայմանները և գպրոցները վատ էին կազմակերպուած, բայց սկսեալ այն ժամանակից երբ յառաջախաղ կարճատեսութեան պայմանները և գպրոցների լաւ կազմութիւնը մեզ յայտնի եղան շաքրժիշկների և մանկավարժների շնորհայի աշխատութիւններից, ուրեմն մեզք կլինէր անարգել գիտնական հետեանքները, և այժմ գործը մնումէ բժիշկներին, ուսուցիչներին և տէրութեանը՝ ուսանողներին սպաննացող այդ շարիքը արմատախիլ անելու համար բոլոր կարելի եղած կարգադրութիւններն անել:

Գ.

Շատ նշանաւոր է նոյնպէս ուսումնարանի վերայ ընկած և այն մեղադրանքը թէ նա պատճառ է լինում ողնաշարի սեան ծոռելուն: «Աոր ուսեր, ասումէ Գիլօմը, շատ յաճախ պատահումեն գպրոցներում, քան որքան մենք կարող ենք մտածել: Աս նկատեցի այդ գանաղան գպրոցների բոլոր դաստանց մէջ, և այն երբեմն նշանաւոր թուով: Ենծ մասամբ ողնաշարի սեան ծոռելու դէպքի հազիւ էին նշմարվում, բայց բաւական էր այդ պակասութիւնն ունեցող աշակերտներին ենթարկուել էլի եւրիշ անհասճոյ ազդեցութեանց և ծոռութիւնը կսկսէր զարդանալ աւելի եւժեղ կերպով: Եներ պէտք է դարձնենք այս առարկայի վերայ ծնողների, ուսուցիչների և գպրոցների վարչութեանց ուշադրութիւնը աւելի այն պատճառաւ, որ սկրդրից ծոռութիւնը աննկատելի կերպով է սկսում, որովհետեւ մանուկը, մասնաւորապէս աղջիկը՝ կամ չի նկատում և կամ ինքնասիրութիւնից զրդուած աշխատումէ ծածկել այդ մանկական արատը մինչև նա հասնումէ այն աստիճանի, որ պարզ կերպով մանկան մօր աչքին է ընկնում: Այսպիսի դէպքերում ասհասարակ բժշկի օգնութիւնն ևն ինդրում: Բայց օգնելն արդէն ուշ է լինում»: Երկու երկան գպրոցական կովտեախն ասաջարկուած հարցին, հին և փորձառու ուսուցչուհիներից շատերը պատասխանեցին, թէ ողնաշարի սեան ծոռելու դէպքեր՝ շատ յաճախ պատահումեն նոցա աշակերտուհեաց մէջ: Մի քանի գպրոցական վարչութիւնը և ուսումնարանական գործի կողմնակի հետազոտողներից մինը Ամերիկայում մի և նոյնը հաղորդեցին: «Ասհասարակ՝ այդ կովտեախ հաշտի մէջ ասպումէ, որ բժիշկների մէջ պտտում է մի կարծիք, թէ 30-40 տարի ասաջ շատ յաճախ էին պատահում ողնաշարի սեանց անկանոն կազմուածքներ: Բայց սկսեալ այն ժամանակից, երբ գպրոցական գործը սկսեց սաստիկ զօրանալ, ծոռելու դէպքերը սկսան շուտ շուտ կրկնուիլ և գրաւեցին բժիշկների ու-

չազրու թիւնը, Այս միջոցիս մենք կգտնենք բժիշկների և մեխանիկների մի ամբողջ դասակարգ, որ շատ լաւ է ապրում այդ ծուռութիւնները բժշկելու միջոցների օգնութեամբ: Այդ ծուռութեանց մեծ մասի պատճառը լիակատար ճշտութեամբ կարելի է վերագրել դպրոցին: Բոլոր աղգերի տղէտ դասակարգերի մէջ այդ այլանդակութիւնները համարեա թէ չկան, այն ինչ նորա շատ սովորական մի բան են դարձած դպրոցների մէջ, որտեղ մատաղ աղջկունք ժամանակի մեծ մասը նստելով են անցկացնում: առանց մի որ և է շարժողութեան որ օգնումէ մկանունքների պնդութեանն ու առողջութեան գորգացմանը: Բունը կարող է ուղիղ գրութեան մէջ մնալ միայն մէջքի մկանունքների գործողութեան ժամանակ: Փոքրիկ աղջկները, որոց անգարգացած կազմուածքը դեռ ևս աննշան մկանունքային սեփ ունի՝ այնպէս են յոգնում նստելուց, որ սապատածն կորանում են և ընդունում են իրանց բունի համար շատ կամ քիչ յարմարաւոր դրութիւն: Հենց որ այդ դրութիւններից մինը սովորական է դառնում նոցա համար, նոյն ժամայն սկիզբն է լինում մէջքի և ուսերի այլանդակ զարգացման: Կարելի է ասել, որ նիւ-Նօրիկան դպրոցական կօմիտեաի հաշիւը իւր հետազօտութիւններով գիտնական գործ չէ կարող կազմել, բայց թէ ողնաշարի սեանց ծուռութիւնները առաջ էլ կային, բայց քիչ էին նշմարվում, ինչպէս առհասարակ մարդու կազմուածքի մէջ միւս բոլոր պակասութիւնները, և թէ վերջապէս այդ մարմնական պակասութեանց բժշկելով ապրող բժիշկների և մեխանիկների թիւը՝ ոչինչ չէ ցոյց տալիս, և թէ ոչ մարդկանց ժամանակակից արհեստը, որ է ապրել մերձաւոր թուրութեանց հաշուով, արհեստ, որ չէր հասնում հին ժամանակներում՝ այն նրութեանց՝ ինչպէս այժմ: Մի և նոյնը կարելի է ասել Քիլմի հետազօտութեանց աննշանաւորութեան վերայօր, որ ասումէ թէ 731 աշակերտներից 218 ը այսինքն 30% ունէին ողնաշարի սեան կորութիւն: Այս ճշմարիտ է, բայց գժբաղաւարտ՝ այն միտքը, թէ դպրոցները պատճառ են լինում ողնաշարի սեան կորութեանը՝ անհերքելի է: Դօկտօր Էյլէնբուրգի հաղորդածին համաձայն՝ 300 կորութիւնից, որք յառաջացած էին միայն նստած ժամանակ բունի վատ դրութիւնից՝

24	կորութիւն ծագած էին մինչև	6 տարին
267		6 ից մինչև 14 տարին
9		յետոյ 14 տարուց:

Էյլէնբուրգի անընդ հատ հետազօտութիւնները ստիպելին նորան՝ կորանալու գլխաւոր ժամանակամիջոցը ընդունել 6 ից մինչև 10 տարին: Իսկ Ալօպլը իւր կողմից հմուտ բժիշկների փորձերից դուրս է բերում, որ կորանալը ընդհանրապէս յառաջանումէ 10 ից մինչև 14 տարեկան հասակը: Այս կերպով դէպքերի մեծամասնութիւնը այնու ամենայնիւ վերաբերումէ դպրոցական հասակին, որ ընդունումէ և Ա. իրիսովը, լիովին բաւական չհամարելով՝ մինչև այսօր գործուած, այս առարկային վերաբերեալ բոլոր հետազօտութիւնները: Մի և նոյն Էյլէնբուրգի հետազօտութեան

Հիմուն վերայ, աւելի աղջիկներն են ենթարկւում ողնաշարի կորանալուն, քան թէ տղայք, այնպէս որ առաջինների յարաբերութիւնը երկրորդների հետ՝ հաւասարումէ 10ը 1ին: Մի և նոյնը հաստատումէ և Գիլովը, աւելով թէ՛ 350 տղաների մէջ այդ հիւանդութեան 62 դէպք (այսինքն 18%) կար, իսկ 381 աղջիկների մէջ 156 դէպք (այսինքն 41%): Կլուպի հաշուելով, կանայք ողնաշարի սեան կորանալուն ենթարկուած բոլոր անձանց մէջ կազմում են 84—89%: Աղամսը հաշուեց, որ 173 հիւանդներից 151 հատը կանայք էին, իսկ 22ը այր մարդիկ: Անօրֆը ասումէ, որ 72 ողնաշարի սեան հիւանդութիւններից 60-ը կազմում էին կանայք: Այս ի հարկէ հասկանալի է, երբ մտաբերելու լինինք, որ տղաները այնու ամենայնիւ աւելի շատ շարժողութեան մէջ են, քան աղջիկները: Փարներն ասումէ, երբ որ կորութեանց համարեա 90% սկսումն զպրոցական կեանքի մէջ և այդ կորութիւնները իսկ և իսկ համապատասխանում են զրելու ժամանակ մարմնոյ զրութեանը, ուրեմն այդ օրինակ փաստերի զօրութեամբ մենք իրաւունք ունինք մեղադրելու զպրոցին, որպէս նոցա գլխաւոր պատճառին: Յիրաւի ուշադրութեան արժանի է այն երևոյթը, որ կորութիւնները հենց այնպիսիք են լինում, որպիսիք որ պայմանաւորվում են զպրոցական պարապմանց ժամանակ մարմնոյ զրութեամբ, ինչպէս օրինակ՝ կարելու ժամանակ, այսինքն աջ ուսը բարձրանումէ վերև, իսկ ձախ կողքը մի փոքր դէպի ներս է սեղմվում: Իմացուած է, ասումէ Ա. Երիսօվը, որ մէջքի ողնաշարի թէքութիւնը ամենից յաճախ պատահումէ աջ կողքին, Այս բանը թուերով ապացուցանելու համար կասենք, որ Աղամսը 742 դէպքերից նկատեց, որ 619 դէպքում ողնաշարի դուրս ընկած մասը աջ կողմն էր ուղղուած: Իսկ այս ուղղութիւնը համապատասխանումէ մարմնոյ այն զրութեանը, որ նկարագրումէ Գիլովը և որը ընդունվումէ զրելու և ուրիշ պարապմանց ժամանակ, օրինակ՝ նկարչութեան, կանանց ձեռագործութեանց ժամանակ և այլն: Այսպիսի համապատասխան իրողութիւնը երբէք չի կարելի դէպքին վերաբերել: Ողնաշարի սովորական կորութիւնը չի կարելի նոյնպէս վերագրել մարդու կազմուածքի հիւանդութեան առանձնակի պայմաններին: Պարոյր հաղորդումէ, որ այդ հիւանդութեան 282 դէպքերից երեւեցաւ որ 218 (այսինքն 79%) ի պատճառը չէր կարելի որոնել կազմութեան մի որ և է հիւանդոտ զրութեան մէջ, այլ նոցա միակ պատճառն էր սովորութիւն զարձած մարմնոյ անկանոն բռնուածքը: Ի հարկէ, սորանից չի հետևում, որ ողնաշարի կորութիւնը յառաջանումէ միայն մկանունքների գործողութիւնից — կարծիք, որ ընդունել էին օրտօպիտներ *) Ճիշդ է միայն այն, որ այդ դէպքում ողներն ընդունում են յայանի փոփոխութիւններ, որք և դառնում են նոցա մշտական ձևը: Այս փոփոխութիւնները կատարվումն մեծանալու ժամանակ, երբ, ինչպէս յայտնի է, ողերը գեռ ևս վերջնական կերպով զարգացած չեն լինում: Սորա համար էլ նոքա

(*) Մի տեսակ մարդիկ, որք պարապում են մարդու մարմնու թիւրութիւններն ու պլանդակութիւնները ուղղելով ու բժշկելով:

Հիշտ են ընդունում՝ անընական ձև և փոխում են իրանց փոխադարձ գրութիւնը: Սորա հետ մի և նոյն փոփոխութեանց ենթարկվում են և կործարի վանդակի ու տաշտի ոսկրները, նոյն վիճակին ենթարկվում են մինչև անգամ և դէմքի ոսկրները և դորանով յառաջացնում են զգալի գործողութիւն այս խոռոչներում գտնուող ներքին մասերում: Այդ հաստատելու համար՝ առաջ բերենք Շիլլերախի փորձը, սա սպիրտ մետրիքական չափերից յետոյ գտաւ, որ ողնաշարի կորութեան ենթարկուած 13 ից մինչև 17 տարեկան մանուկների ներշնչած օդի քանակութիւնը պակասումէ $\frac{1}{3}$ -ով, այլ դէպքերում մինչև անգամ կէսով, մի խօսքով, շնչառութիւնը՝ առողջ կեանքի այդ առաջին պայմանը սատարի վնասվումէ: Այն ինչ շնչառութիւնը առանց էն էլ գալրոցում վատ դրութեան մէջ է, Գլխի կոր դրութիւնից, ասումէ Ա. Երևույթը, բուն էլ բնականաբար նոյն դրութիւնն է ընդունում, մանաւանդ եթէ սեղանը ցածր է: Սորանից ծագումէ ամեն անգամ՝ որովայնի սխմուիլն, որ արդելումէ ստոծանու՝ այդ ամենազօրեղ շնչառական մկնակի գործունէութեանը, Թերակատար շնչառութիւնը արգելումէ պարանոցի վէնաներից ընթացող արեան պատ գնացքը դէպի կործարք ուր և նա պէտքէ վերադառնայ: Սորա վերայ պէտքէ աւելցնել և այն աղդեցութիւնը, որ յառաջանումէ շնչառութիւնը ուշանալու ազագաւ գործադրուած շարունակ ուշադրութիւնից: շնչառութիւնը այնքան աւելի է ուշանում, որքան պակաս կարեորութիւն է զգացվում նորա մէջ, որի պատճառը լինումէ լոկ խօսակցութիւնը: Սորանով բացատրվումէ այն հանգամանքը, որ երկար, միատեսակ և հանգիստ մտաւոր դրաղմունքից յետոյ կարեորութիւն է զգացվում խորը հոգեոց հանել, իսկ թոյլ կամ յոգնած մարդիկ հակամէտ են լինում յորանջելու, որով այլ ինչ է, եթէ ոչ խորը ներշնչութեան բնական տեսքը: Սորա հետ պէտքէ նկատել, որ պարանոցը իր արիւնատար անօթների վերայ կոացնելու ժամանակ, որոց միջով (անօթների) արիւնը գլխից վերադառնումէ դէպի սիրտը, ճնշումն է յառաջանում, որ աւելի զօրեղանումէ ամուր սեխմող հագուստի շնորհիւ: Այս բոլոր հանգամանքները նպաստում են արեան այսպէս անուանեալ կրաւորական կամ մեքենական կանոններին—գալրոցական հիւանդութեանց այդ երրորդ տեսակ աղբիւրին, արգելելով վէնաների մէջ արեան ազատ շրջառութիւնը: Սակայն, գալրոցների մէջ կայ և մի պատճառ, որ յառաջացնումէ և արեան ներգործական հաւաքումն, այսինքն արեան առատապէս ժողովուրիլը գլխի մէջ արտերիանների կամ զարկ երանների միջոցով,—այդ ուղիղի ձգեալ գործունէութիւնն է:

Նա՛ ինչպէս յայտնի է, կապուած է արեան շրջառութեան հետ զարկեթրակներով և սոցա օգնութեամբ կարող է յառաջացնել ոչ միայն սրտի ուժեղ գործունէութիւնը, այլև ընդլայնումն արտերիանների, որի հետևանքը լինումէ արեան հաւաքումն գլխի մէջ, Գլխի ուղեղի այդ դրութեան նշանները լինում են երեսի, ականջների և աչքերի կարմրութիւնը, սակայն պատահումէ և բոլորովին ընդհակառակն, որ է երեսի գունատութիւնը, որի

որտաձառն է արիւնատար անօթների շարունակաբար ընդլայնումն և սեխմուխլը: Այդպիսի դէպքում, արտաքին գունատութիւնը, որ նակայն կապակից է լինում երբեմն ականջների կարմիր գունով՝ բնաւ չի ցոյց տալիս ուղեղի արեան սակաւութիւնը, նա կարող է լինել արիւնով մինչև եռօրոտը մեծ մեծ գունատ: Արեան՝ մասամբ այս կրաւորական և մասամբ ներգործական ժողովումներից յառաջացած զանազան հիւանդութեանց մէջ կան երեք հիւանդութիւնք, որք առիթ տուին նոր ժամանակներս վիճակագրական հետազոտութեանց: Այդ հիւանդութիւններն են — խուլը, արիւնհոսութիւնը քթից և գլխացաւերը:

Գլորոցական խուլը, որ Պիլօմի խօսքերով աշակերտաց մէջ յայտնի է հաստ վիզ անուամբ, յառաջանում է վեճական արեան բնուելուց, որ հետևում է դադրած մանկան գլուխը պահելու վատ դրութիւնից, անկարող լինելով մի որ և է բանի կօթնել: Այս հիւանդութեամբ բռնուած են ընդհանրապէս աղջկունք, և Պիլօմին պատահել է տեսնել այնպիսի աղջկներ, որք մի տարի մնալով գլորոցում, ստացել են այդ հիւանդութիւնը: Անդհանրապէս նա գտաւ, որ Նէյէնբուրգի քաղաքական գլորոցի մէջ 350 տղաների և 381 աղջկանց մէջ 169 տղայ և 245 աղջիկ ունէին արդէն գլորոցական խուլ: Այսինքն հիւանդ աղաները տալիս էին 40/1, իսկ հիւանդ աղջիկները 64/1: Ազդի է, օրինակ, Փալկը ասում է, որ նորան չյաջողեց տեսնել Պերմանիայում այդ երեւոյթը և դորա համար էլ դորա պատճառը տալիս է մասամբ Շվեյցարիայի կլիմայի պայմաններին: Ընէ և Պիլօմը էլ ասում է, որ Նէյէնբուրգում այդ հիւանդութիւնը ուտումնարաններից դուրս համարեա ոչ մի տեղ չի պատահում: Մի և նոյն կերպով ուղի է նոյնպէս և այն, որ գլորոցական խուլը յայտնի է միայն Պիլօմի հետազոտութեամբ: Բայց Վիրխովը այս հիւանդութեան գոյութիւնը շվեյցարական գլորոցների մէջ և իգական սեռի առ այդ հիւանդութիւնն ունեցած հակամրտութիւնն, որ պատճառւում է պարանոցի անօթների լայնանալուց, չի ժխտում և հազիւ թէ կարելի լինի մերժել էլ: Աւելի ընդհանուր նշանակութիւն ունի արիւնհոսութիւնը քթից, Պիլօմը ասում է, որ նա յէնբուրգի քաղաքական գլորոցում քթից արիւնհոսութեամբ բռնուած էին 155 աշակերտ: Այսինքն 21/1 բոլոր աշակերտների, որից աղաներին ընկնում էր 22/1, իսկ աղջիկներին 20/1: Առաջինների արիւնհոսութիւնը փոքր առ փոքր նուազում էր տարիների անցնելով, իսկ աղջկերանցը նկատւում էր մի և նոյն երեւոյթը, բայց փոքր կանոնաւորութեամբ: Քէկկերը ցոյց տուեց ընդամենը մանուկների 11, 3/1, որք ենթոթկուած էին քթի արիւնհոսութեանը: Նա չունի թուերի մանրամասն բացատրութիւնք, բայց նա ասում է, որ արիւնհոսութեան հակամրտութիւնը ամենից յաճախ պատահում է իմնապիայի բարձր դասատանց մէջ, կանանց բարձրագոյն գլորոցներում և մէկ մասնաւոր գլորոցում: — առհասարակ այն գլորոցներում, որտեղ աշակերտներին երկար են պահում դասատանց մէջ, և որտեղ նոքա շատ հազիւ են օգտուում ազատ օդի մէջ շարժողութեամբ: Աերջնապէս գլխացաւերը, որոնցով

բռնուած էին Գիւրծի հետադատութեամբ 731 աշակերտներէց 296 հոգի աշխինքն 40/ , կազմուածն զպրոցական հիւանդութիւններէց ամենասովորականները, նորանով բռնուած աղջիկները կազմուած էին 51/ , իսկ տղաները — 28/ : Առանձնապէս այդ հիւանդութեամբ բռնուած էին վարբիկ աշակերտները, Գօկտօր Բեկկերը հետադատեց Գարմշաստի և Բեսսունգինի մէջ հասարակաց և մասնաւոր զպրոցներում 3,564 երկսեւ աշակերտաց ասողջութիւնը և եկաւ այն եզրակացութեանը որ 27,3/ , այսինքն 974 աշակերտ ունէին գլխի ցաւ, Թէ այսպէս և թէ այնպէս՝ զպրոցներում մանկանց զխոցաւութիւնը ամենքին յայտնի մի իրողութիւն է, գլտեն պղ և բոլոր մանկավարժները, թէ և շատ յաճախ նոքա աշխատուան մերժել այդ հիւանդութեան երևոյթները մանկանց վերայից՝ զորա պատճառը նոցա ծուլութեան մէջ միայն որոնելով, Իժրաղտարար լիակատար ցուցակները դեռ ևս պակասաւոր են, որովհետեւ նոցա մէջ գտնուում են միայն պրոցենտական և ոչ թէ իսկական թուանշաններ, Ըստ երևութին՝ այս բոլորից կարելի է եզրակացնել, որ քաղաքական զպրոցներում հիւանդների ամենամեծ մասը գտնուումէ ստորին դասատանց մէջ, իսկ բարձրագոյն զպրոցներում՝ (գիմնազիաներ, կանանց բարձրագոյն զպրոցներ) — ընդհակառակի, Գիմնազիայի Ա. դասատան աշակերտներէց 80,8/ -ը գանդատուածէին գլխոցաւից, Ա. յս պատճառով, նկատուած զօկտօր Այլնկեն, ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ որքան վնասակար կարող է լինել ուղեղի բռնի գործունէութիւնը, որից կծագին բթմատութիւն և մտածելու անընդունակութիւն, իսկ երբեմն էլ ուղեղի վնասակար հիւանդութիւններ, նեարդերի և մարտդութեան խանգարումն, Բեկկերը գալիս է այն եզրակացութեան՝ թէ աշակերտները իրանց զպրոց այցելելու ատաջին տարիներում աւելի քիչ են ենթարկուած գլխոցաւի և թէ այդ ցաւը զօրեղանուած ժամանակի հետ ի միասին, որին նպաստուան դասատանց սննեակները և զասերի պարսպմանց երկար ժամանակամիջոցը, որ պահանջումէ մտքի լաբուած գրութիւն, Ի դէպ ասումէ Ալրիսովը, կարելի է այստեղ խօսել և բէն քաղաքայն ներգործութեան մասին, որ անուած նա աշակերտների հոգեկան կարողութեանց վերայ, Անկասկած այդ գրութեան հետ կապակց են մտամոլորութիւն և մտածելու անընդունակութիւն, եթէ որ այդ գրութիւնը շարունակուի, ուղեղը կարող է վտանգի ենթարկուել, Այսին բրժիշկներ, որք մեղազրուումէին զպրոցին մանուկների մէջ ուշաթափութիւն երեւելու պատճառով, որ յետոյ խելացնորութեան էր փոխարկում, Ա. յս գործի վրայօր աւելի վճռողապէս իւր հայեացքը սրտայայտեց Փ. Գէյերը, որ համաձայն է վերոյիշեալ բժիշկների արտայայտած մտքի հետ, Ասկայն այդ մտքը դեռ ևս բաւարարիչ փաստերով ապացուցված չէ, այդ պատճառով էլ մենք չունինք հաստատուն գիտնական հիմունք, քանի որ այդ հիմունքը չունինք, պէտքէ աչքի առաջ ունենանք հասարակաց ցուցումները վտանգի գոյութեան մասին, թէ և նորա ներգործութիւնը կամ չը ներգործութիւնը իւրարանջիւր մասնաւոր դէպքում մեծ կախումն ունի

անհատի առանձին հակամիտութիւններից կամ պակասութիւններից:

Բացի այս հիւանդութիւնները, դպրոցների մէջ սաստկապէս զարգանում են՝ բարակացաւ, ենթատամբսեան և փոփոխական հիւանդութիւններ և այլն: Լօրինդերը, Աարմիտայը և Էնդէլը հաստատուին բարակացաւի զարդացումն դպրոցներում: Թէ՛ թորային և թէ՛ կոկորդային բարակացաւը, ասումէ Ա. Իրիսօփը, սկսումէ դպրոցական 5-րդ տարուց մինչև 10-րդ տարին, և պատճառ է լինում մահուան, որ աւելի զօրեղանումէ 10-րդ տարուց մինչև 15-րդ տարին և որ ահուելի յառաջագիժութիւն է անում վերջին շրջանում: այսինքն է 15-րդ տարուց մինչև 20-րդ տարին: Հարիւր մեռածների վերայ գալիս է.

5-րդից մինչև	10-րդ տարին	մեռածների թիւը	4,81	Թորային կոկորդային բարակացաւից:
10-րդից "	15 " "	" "	12,96	
15-րդից "	20 " "	" "	31,88	

Բացի այս՝ բարակացաւից վախճանած են 8,93%, 7,90% և 4,74%: Հնաշուկով այդ հիւանդութեան միւս մասերից վախճանուածների թիւը, Այս իրողութիւնը յիրաւի սարսափելի է, եթէ ինկատի անունք և այն հանգամանքը, որ կեանքի այդ շրջանում տիճից և խօլերայից մեռնողների թիւն էլ շատ է լինում: Գպրոց երթեւեկելը ազդումէ և մտրտութեան գործարանների խանգարման վերայ: Այստեղ կարելի է ցոյց տալ շարունակ դպրոց երթեւեկելուց յետոյ, ախորժակը կորցնելու յաճախ կրկնուող երեւոյթի վերայ: շարաթնեւորով և կամ ամիսներով ախորժակը կորցնելու երեւոյթներ կրկնուում են շատ յաճախ: Սորա հետեւանքները լինում են՝ անկանոն դուրս գնալը, արեան վատ յատկութիւն, դազրածութիւն և խոնջութիւն բոլոր մարմնոյ մէջ, նիհարութիւն, գեղնութիւն և անտարբերութիւն առ ամենայն ինչ: Գաստր արդարացի կերպով հիմնվումէ իւր շարադրութեան մէջ այս երեւոյթների վերայ: Բացի դորանից ինկատի աննկու է և ճննդական գործարանները, որոնք եթժարկուած են շատ վնասակար ներդործութեանց գիւղական և մանաւանդ բարձրագոյն դպրոցների այցելութեան վերջին ժամանակներում: Գաստր այս բանի վերայ էլ խօսեց: Ա. արակիչ հիւանդութիւնները, գլխաւորապէս տարածուին դպրոցները: Ա. երջին հանգամանքը մասամբ կարող է վերաբերել և միւս հիւանդութեանց, որք են օրինակ՝ խօլերան, ծաղիկը և շնչասպառ հազը: Մնումէ յիշել այլ ևս մորթային այլ և այլ հիւանդութիւնները և ոչիւր ևլն:

Ահա մի կարգ հիւանդութեանց, որ զարգանում, տարածվում և զօրեղանում են դպրոցներում: Չարժէ խօսել անդամ, որ յիշեալ հիւանդութիւնները դեռ բոլորը չեն, որովհետեւ իրանք բժիշկները վերջին ժամանակներում միայն՝ շատ թէ քիչ լուրջ կերպով պսքապէցան դպրոցի առ առողջութիւնն ունեցած ազդեցութեան հարցով: Մինչև այժմ նորա իրանց գործունէութեան շրջանը սահմանափակում էին նորանով, որ օգնում էին մարդոց միայն այն ժամանակ. երբ նորա հիւանդանում էին: Այս առարկայի վերաբերութեամբ բժիշկների արած հետազօտութիւնները դեռ ևս իրեանց կատարելութեան աստիճանին չեն հասած և աւելի շուտ

Նորա ծածկում են չարիքը, քան չափազանց դրուժեամբ ներկայանում, բայց արդէն և այդ հետազօտութիւններով այնքան դժուար մի բան է դառնում այդ չարիքը, որ չի կարելի նորա վերայ ուշադրութիւն չըդարձնել։ Աւելորդ է ասել, որ այս բոլոր հիւանդութիւնները կարող են զարգանալ և մնալ երեխայոց մէջ տանը, և այն՝ կարող ենք ասել աւելի մեծ չափով, քան դպրոցներում։ Բայց ի՞նչ պայմանների տակ է պատահում այս։ Այդ պատահում է այն ժամանակ միայն, երբ որ տանը ինչպէս և դպրոցում՝ երեխան միևնոյն վնասակար պայմանների տակ է գտնվում, որոց դէմ և բժիշկները յարմար դատեցին պատերազմ սկսել, կամ երբ որ տանը երեխայի կեանքի պայմանները դպրոցական կեանքի պայմաններից աւելի վատ են, որ յաճախ պատահում է տեսնել հասարակութեան ամենախիտը և ամենաանկիրժ դասակարգերի մէջ, Բայց այս հանգամանքով չի կարող դպրոցն արդարանալ. չէ որ գործարանների մէջ մանկանց կեանքը աւելի մեծ վտանգի է ենթարկուած, բանտերի մէջ աւելի շատ մեռնողներ են լինում. բայց չէ՞ որ դպրոցը ո՛չ գործարան է և ո՛չ բանտ. նորա կոչումն է հոգալ մարդու մտաւոր և ֆիզիքական դարգացման մասին և ազատել նորոն իւր առողջութեան համար վնասակար բոլոր պայմաններից։— Այս պայմանները չեն կազմում դպրոցի համար որ և իցէ ճակատագիր, առանց որոց չէր կարող դպրոցը գոյութիւն ունենալ։ Այն, այդպիսի մի միտք կը լինէր ոչ միայն տխուր, այլ իրօք անտեղի, որովհետև, այդ ճշմարիտ համարելով, պէտք էր տգիտութեան մէջ թողնել մարդկութեան մեծ մասը, Գպրոցի ցոյց տուած վնասակար ներգործութիւնները մինչև այսօր պաշտպանվում էին միայն հին մանկավարժների տգիտութեամբ, բժամտութեամբ կամ անհողութեամբ. այդ պատճառով էլ իւրաքանչիւր որ նոցա հետ կարող է և պէտքէ մարտնչի, Բայց մի որ և է չարեաց դէմ մարտնչելու համար պէտքէ ճանաչել այդ չարիքը, նորա պատճառները և հետևանքները.— ահա թէ ի՞նչու համար մենք չենք երկնում մատնացոյց լինել դպրոցից պատճառուած վնասակար ներգործութեանց վերայ, երևի այս իսկ պատճառով էլ զօկտօր Երիսմանը կարճատեսութեան վերայ խօսելիս չը վախեց ասել թէ « յիրաւի դպրոցը այդ վնասակար հիւանդութեան պատճառ է լինում » . — նա ի հարկէ հասկանում էր, որ ոչ մէկը իւր խօսքերից չէր եզրակացնի, թէ դպրոցից դուրս կարճատեսներ չէին լինել, Եւ մեզ օտարօտի է թվում այն երեւոյթը, որ զօկտօր Ազամիւկը զօկտօր Երիսմանի աշխատանքի վերայ հաշիւ գրելով, փախում է, որ ընթերցողք զօկտօր Երիսմանի հետազօտութիւններից իսկ և իսկ վերդիչեալ հետևանքին կը հասնեն և կը գան այն եզրակացութեան՝ թէ « ուսումն՝ է մի անթափանցելի խաւար, որ խաւար է ամենապղտոր ջրիցն անգամ » . — որից արդէն կարող է հետևել՝ սարսափելի է անգամ արտայայտել, այսպիսի մի եզրակացութիւն, « տգիտութիւնն է լոյս » : Ի զուր է երկիւղ կրում բժիշկը, Զէ որ այդ կերպ նայելով իրերի վերայ, կարելի է և այն եզրակացութեան գալ թէ նորա՝ որք հետազօտել են գործարանների ներգործութիւնը բա-

նուորնների առողջութեան վերաբերութեամբ, ձգտել են ոչնչացնել դործարանների արդիւնքը, իսկ նորա, որք հաշուել են այժմեան երկաթուղիների պատճառած՝ դժբաղտ դէպքերը, ձգտել են ոչնչացնել երկաթուղիները։ Ա՛չ, դօկտօր, այդ օրինակ հետադատութիւնները այդ նպատակով չեն լինում, այդ հասկանումէ անգամ իւրաքանչիւր մի զիմնաղիայի աշակերտ, այնպէս որ ձուռ եզրակացութեան առիթ տալու համար երբէք չը պէտքէ մտածել։

(Ե-բ-ն-է-է)

Մակար Տ. Սարգսեան.

Հ Ա Յ Մ Ա Ն Կ Ա Ս Ր Ա Ջ Ո Ւ Հ Ո Ւ Մ Ա Ղ Թ Ա Ն Ք Ը .

Զօրացո՛ւր Յիսուս, այս նոր մանուկը,
Անարատ, անմեղ ծնուած գառնուկը.
Կենսատու Խաչդ թո՛ղ օգնի սորան,
Հայ արիւն կրի՝ Արամի նման.

Յանձնիր Տէր, յաղթող հզօր հրեշտակիդ,
Որով նա վանէ՝ թշնամին Խաչիդ.
Պիտանի լինի ազգին Արամեան՝
Երի՛, Տիգրանի՛ Վահանի նման.

Պարզեիր, ս՛ի Տէր, երկար կեանք սորան,
Լինի ազգասէր՝ ինչպէս էր Վարդան,
Զօրացո՛ւր այս տունին, ճետն Հայկազեան՝
Գեղեցիկ ու վեհ Արայի նման.

Սիրիբ քո ազգը, մանուկ անեման,
Թող ջնծա՛ քեզնով՝ ազգդ Արամեան.
Լուսատու զամբար եղիբ դու նորան,
Հալածիբ մութը՝ արևի նման.

Քեզ Հայ եղբայրներ ուրուրեք որ կան,
Նորա ևս քեզ հետ՝ Տէրամբ զօրանան.
Մեր Եկեղեցուն և մեր Ազգութեան՝
Պաշտպան կանգնեցէք՝ Վահանի նման.

Մանկաբարձուհիս իւր վերջին խօսքեր՝
Աւանդումէ ձեզ, անմեղ մանուկներ, —
Դուք, որ Հայ ծնաք, սիրուն զաւակներ,
Սիրէք ձեր ազգը՝ զո՛ւս Հայի նման.

Գրաշար Ներսէս Տ. Աւետիբեանց.